Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 475 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ փոխվարչապետի 27 հունիսի 2022 թ., 463-Ա որոշմամբ, բարեգործական է որակվել ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում բնակելի տների և մանկապարտեզի կառուցման ծրագիրը: Տները նախատեսված են եղել պատերազմի հետևանքով զոհված կամ հաշմանդամ զինծառայողների, ինչպես նաև 5 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների համար, որոնք տեղահանվել են Արցախից և չեն կարող վերադառնալ իրենց բնակավայրեր: Այժմ սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է կառուցվող բնակելի տները և մանկապարտեզը ապահովել անհրաժեշտ գույքով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	47,557,080 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Պատերազմի հետևանքով զոհված կամ հաշմանդամ զինծառայողներ, ինչպես նաև 5 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ և Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2023 թ. հունիսի 30-ից մինչև 2023 թ. օգոստոսի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է պատվիրել և ձեռք բերել բնակելի տների ու մանկապարտեզի համար նախատեսված գույք: Իրականացվելու է՝ 2023 թվականի հունիսի 30-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում, բնակելի տների գույքի արժեքը կազմելու է՝ 26,753,040 դրամ, իսկ մանկապարտեզի գույքի արժեքը՝ 20,804,040 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Բնակելի տների համար պատվիրվելու և ձեռք են բերվելու մահճակալներ, զգեստապահարաններ, հագուստի կախիչներ, դարակներ, կախովի պահարաններ, ճաշասենյակի և խոհանոցի սեղաններ և աթոռներ, որոնք տեղափոխվելու և տեղադրվելու են առանձնատներում՝ 26,753,040 դրամի չափով: 2. Մանկապարտեզի համար պատվիրվելու և ձեռք են բերվելու մանկական սեղաններ և աթոռներ, գրապահարաններ, մանկական զգեստապահարաններ, խոհանոցի լվացարան, դարակաշարներ, շվեդական պատ սպորտդահլիճի համար՝ 20,804,040 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ